

ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻՅԱՆԻՆ ԱՐՏԱՔՍԵԼՆ ԱՆՀՆԱՐ Է

Հունիսի 9-ին լրանում է Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլյանի բանտարկության ժամկետը: Նա, փաստորեն, «կալենդար»՝ ամբողջ ժամկետը (1,5 տարի) 2006-ի դեկտեմբերի 9-ից նստեց: Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի զորակցության կոմիտեն այս առթիվ հայտարարություն է տարածել, որտեղ ընկերները հույս են հայտնել, որ հունիսի 9-ին «Ժիրայրը կազատվի եւ կվերադառնա իր բնականոն կյանքին ու գործունեությանը»: Սակայն «ստացվել են խիստ անհանգստացնող եւ ուղղակիորեն Ժիրայր Սեֆիլյանին հասցեագրված ազդանշաններ այն մասին, որ առաջիկա օրերին վարչախումբը պատրաստվում է հերթական ստորությունը գործել Արցախյան պատերազմի հայտնի հրամանատարի նկատմամբ՝ արտաքսել հայրենիքից: Նման քայլը, բարոյական հանցանք լինելուց բացի, նաեւ ՀՀ օրենսդրությունը բազմաթիվ կետերում խախտող իրական քրեական հանցագործություն կլինի եւ Ժիրայր Սեֆիլյանի նկատմամբ իշխող վարչախմբի հանցագործ հետեւողականության հերթական արտահայտությունը»: Ժիրայր Սեֆիլյանի շահերի պաշտպան Վահե Գրիգորյանը նշեց, որ Ժիրայր Սեֆիլյանին արտաքսելը պարզապես անհնարին է: «Ես նման փաստաթուղթ կամ գրություն չեմ տեսել, բայց «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը արգելում է արտաքսել մարդուն, եթե նրա խնամքին կա անչափահաս երեխա: Իսկ Ժիրայր Սեֆիլյանի խնամքին երկու անչափահաս երեխա կա», - տեղեկացրեց Վահե Գրիգորյանը: